**ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ)**

**ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**Հաստատում եմ՝**

**Ռեկտոր՝ Է.Մ. Սանդոյան**

**№ _____ 2025թ.**

# ԿՐԹԱԿԱՄ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**Բակալավրի կրթական ծրագիր՝ 031201.01.6 - Քաղաքագիտություն**

**Դասիչ մասնագիտություն՝ 031201.00.6 – Քաղաքագիտություն**

**Ուսուցման ձևը՝ Առկա**

**Համաձայնեցված է՝**

Միջազգային հարաբերությունների և հասարակաքաղաքական գիտությունների ինստիտուտի տնօրեն

Մարգարյան Ե.Հ.

_____

(ստորագրություն)

Կ.Ա. Միրումյանի անվ. Քաղաքագիտության Ամբիոնի վարիչ

Սարգսյան Հ.Լ.

_____

(ստորագրություն)

## 1.ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

«Քաղաքագիտություն» բակալավրի կրթական ծրագիր, իրագործվող ԲՄԿ ՊՈՒՀ Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի կողմից **«031201.01.6» *«Քաղաքագիտություն»*:**

«Քաղաքագիտություն» բակալավրի կրթական ծրագիրը իրագործվում է առկա կրթության ձևով:

«Քաղաքագիտություն» բակալավրի կրթական ծրագրով ուսումնառության ժամկետը կազմում է 4 տարի:

«Քաղաքագիտություն» բակալավրի կրթական ծրագրի ծավալը կազմում է 240 կրեդիտ:

## 2. «ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**2.1. Ծրագրի բովանդակությունը, նպատակի և խնդիրների մանրամասն նկարագրությունը, կրթական ծրագրի ակտուալությունը և յուրահատկությունը, տվյալ կրթական ծրագրի/մասնագիտության շրջանավարտների կարիքը աշխատաշուկայում:**

«Քաղաքագիտություն» կրթական ծրագրի նպատակն է ապահովել լայն մտահորիզոնով, վերլուծական, քննադատական և ստեղծագործական մտածողությամբ մասնագետների համակարգային և բարձրակարգ պատրաստումը, զինել քաղաքական իրականության մասին հիմնարար տեսական և կիրառական գիտելիքով, քաղաքագիտության հայեցակարգերի, տեսությունների և մեթոդների իմացությամբ, ինչը կազմավորում է շրջանավարտների արժեհամակարգը և թույլ է տալիս սթափ գնահատել քաղաքական որոշումները, քաղաքական ինստիտուտները, քաղաքական գործընթացները:

«Քաղաքագիտություն» կրթական ծրագիրը ապագա քաղաքագետին հնարավորություն կտա աշխատելու պետական կառավարման, միջազգային կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության կազմակերպություններում, ՁԼՄ-ներում, ուղեղային կենտրոններում, հետազոտական կառույցներում որպես քաղաքական խորհրդատուներ, փորձագետներ, PR-մենեջերներ, քաղաքական

լրագրողներ, քաղաքական վերլուծաբաններ և կիրառական հետազոտություններ իրականացնող մասնագետներ, ինչպես նաև որպես գիտաշխատողներ գիտահետազոտական հաստատություններում և բուհերին կից հետազոտական կենտրոններում:

«Քաղաքագիտություն» կրթական ծրագրի շրջանակներում շրջանավարտները պատրաստվում են լուծելու մասնագիտական հետևյալ խնդիրները.

- Կազմակերպչա-կառավարչական;
- Փորձագիտավերլուծական;
- Գիտահետազոտական:

*Կազմակերպչա-կառավարչական գործունեություն*

- տեղական ինքնակառավարման մարմիններում, քաղաքական կուսակցությունների և հասարակական-քաղաքական միավորումների, տեղական ինքնակառավարման մարմինների, բիզնես կառույցների և լրատվամիջոցների ապարատներում կառավարման գործընթացների կազմակերպմանը մասնակցություն;
- մասնակցություն քաղաքական քարոզարշավներին, ընտրական գործընթացի կազմակերպմանը, խորհրդատվական աշխատանքներին;
- սոցիոլոգիական հետազոտությունների տվյալների մշակում հետագա քաղաքական վերլուծությունների համար;
- քաղաքական հակամարտությունների և վեճերի լուծման ոլորտում կառավարում;
- քաղաքագիտության գիտական հետազոտությունների ոլորտում նախագծերի կազմակերպում և կառավարում;

*Փորձագիտավերլուծական գործունեություն*

- միջազգային և տարածաշրջանային մակարդակով փորձագիտական և վերլուծական աշխատանքների իրականացում՝ օտարալեզու նյութերի օգտագործմամբ;
- քաղաքագիտական թեմաներով գիտական հետազոտությունների վերլուծություն և քննություն;
- քաղաքական և տնտեսական միջազգային համագործակցության իրականացման համար առկա առաջարկների գնահատում և նոր առաջարկների մշակում;

- Ռուսաստանում, Հայաստանում և արտերկրում քաղաքական գործընթացների մասին ռուսերեն, հայերեն, անգլերեն լեզուներով տեղեկատվություն հավաքելու, մշակելու, վերլուծելու և ներկայացնելու ունակություն:

*Գիտահետազոտական գործունեություն*

- մասնակցություն քանակական և որակական հետազոտությունների իրականացմանը, տվյալների բազաների ստեղծմանը, տվյալների մշակմանը և ստացված արդյունքների որակական մեկնաբանմանը;
- գիտական տեքստերի պատրաստում գիտական ամսագրերում տպագրելու համար;
- գիտական սեմինարներին, գիտաժողովներին, կլոր սեղաններին մասնակցություն;
- կոնֆլիկտաբանության, GR -ի և քաղաքական կառավարման ոլորտներում գիտական հետազոտությունների իրականացում;
- ՁԼՄ-ների մոնիտորինգ և վերլուծություն, մեդիա խթանման ռազմավարությունների ուսումնասիրություն:

**2.2. Բակալվրի կրթական ծրագրի պարտադիր բաղադրիչներն են պրակտիկայի ուսումնական և արտադրական տեսակները՝**

- Ուսումնական պրակտիկայի ձևերը՝ գիտահետազոտական աշխատանքի առաջնային հմտությունների ձեռք բերում (Կուրսային աշխատանք);
- Արտադրական պրակտիկայի ձևերը՝ մասնագիտական պրակտիկա, գիտահետազոտական սեմինար, ավարտական աշխատանքի թեմայով գիտահետազոտական աշխատանք (նախադիպլոմային աշխատանք):

Պրակտիկան՝ որպես մասնագետների պատրաստման կարևոր բաղադրիչ, ուղղված է սովորողների մասնագիտական կոմպետենցիաների՝ հմտությունների, կարողությունների և ունակությունների ձևավորմանը: Հիմքում ընկած է տեսական գիտելիքների և գործնական կարողությունների ինտեգրալը:

Ուսումնական պրակտիկայի նպատակն է ամրապնդել և խորացնել ուսումնառության ընթացքում ուսանողի ձեռք բերած տեսական գիտելիքներն ու նպաստել մասնագիտական

կարողությունների և հմտությունների ձևավորմանը: Ուսումնական պրակտիկան, որպես կանոն, կազմակերպվում է բակալավրիատի 2-րդ և 3-րդ կուրսերում:

Արտադրական պրակտիկայի նպատակն է մասնագիտության կրթական ծրագրի մեջ ներառված դասընթացներին ստացած գիտելիքների ամրապնդումը և խորացումը, մասնագիտության կրթական ծրագրերում նշված անհրաժեշտ գործնական հմտությունների և կարողությունների ձեռք բերումը: Արտադրական պրակտիկան կազմակերպվում և անցկացվում է համալսարանի և տվյալ կազմակերպության կամ ձեռնարկության միջև կնքված պայմանագրերի հիման վրա:

«Քաղաքագիտություն» բակալավրի կրթական ծրագրի արտադրական պրակտիկայի

նպատակներն են՝

- հետազոտական գործունեության գործնական հմտությունների խորացում;
- ուսանողների ծանոթացումը գիտական հետազոտությունների անցկացման մեթոդներին, գիտական աշխատանքի կատարման տարբեր փուլերի, գիտական որոնումների, ուսումնասիրությունների եւ հետազոտությունների արդյունքների վերլուծության, մշակման, համակարգման մեթոդներին, դրանք ավարտական աշխատանքի գրելու ժամանակ կիրառելու կարողությունների ձեւավորումը,
- հետազոտությունների նպատակի, խնդիրների ձեւակերպման, նախապատրաստման, կազմակերպման, իրականացման, արդյունքների ամփոփման կարողությունների ձևավորումը:
-ծանոթանալ ընկերության/կազմակերպության /լաբորատորիայի կառուցվածքին և գործունեությանը
- հետազոտության էմպիրիկ հիմքի համակարգումը, հետազոտության արդյունքների մշակումը, գնահատումը եւ մեկնաբանությունը;
- ինքնուրույն հետազոտության ունակություն՝ ավարտական որակավորման աշխատանքի թեմային համապատասխան;
- ուսումնասիրության վերջնական եզրակացությունների ձեւավորում եւ ուսումնասիրվող խնդրի վերաբերյալ գիտականորեն հիմնավորված առաջարկությունների եւ գործնական լուծումների առաջադրում:
-ծանոթանալ նորմատիվային փաստաթղթերին, ստանդարտներին, կիրառական ծրագրերի փաթեթներին;

-կատարել ընկերության/կազմակերպության կողմից նշանակված ղեկավարի անհատական հանձնարարականը;
-կազմել պրակտիկայի հաշվետվությունը՝ մշակված նյութերի կցումով:

Ուսանողների արտադրական պրակտիկան անց է կացվում Օրբելի - Վերլուծական-հետազոտական կենտրոնում, ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմում, ՀՀ ԱԳՆ-ի համապատասխան բաժիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանում և այլ պետական կառավարման գերատեսչություններում, միջազգային և հասարակական տարբեր կազմակերպություններում, ինչպես նաև զանգվածային լրատվական միջոցներում:

**2.3 «Քաղաքագիտություն» բակալավրի կրթական ծրագրի պետական ավարտական ատեստացիան ներառում է՝**

- ավարտական աշխատանքի կատարումը և հրապարակային պաշտպանությունը:

## 3. «ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

«Քաղաքագիտություն» բակալավրի կրթական ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

*Գիտելիքները* ՝

1. Թվարկել քաղաքագիտական հիմնական հասկացություններն ու սահմանումները և տեղայնացնել դրանց իմաստն ու նշանակությունը հայ իրականության մեջ:
2. Համեմատել հայոց պետականության պատմության իրադարձությունները, նորագույն փիլիսոփայական ուղղությունների, սոցիոլոգիայի, կրոնագիտության և տնտեսագիտության հասկացություններն ու մասնագիտական կարևոր եզրույթների սահմանումները:
3. Բացատրել քաղաքական տեսությունների ձևավորման ու զարգացման օրինաչափությունները, անցած դարաշրջաններում պետության,

քաղաքականության մասին ձևավորված առավել կարևոր տեսական հայեցակարգերը:

4. Ձևակերպել քաղաքական մտքի և քաղաքագիտական դպրոցների առավել հայտնի ներկայացուցիչների հիմնական գաղափարները:

*Հմտությունները՝*

- ***գիտելիքի կիրառման հմտությունները՝***

1. Գործնականում կիրառել քաղաքական կանխատեսման, ընտրությունների, ինչպես նաև ընտրական տեխնոլոգիաների կիրառման ոլորտներում ձեռք բերված գիտելիքները:
2. Իրականացնել համեմատական քաղաքագիտության կիրառական և մեթոդաբանական գործիքակազմով քաղաքական համակարգերի, գաղափարախոսությունների, քաղաքական ինստիտուտների տիպավորում և դասակարգում:
3. Վերլուծել ժամանակակից քաղաքական գործընթացները:
4. Գործնականում կիրառել քաղաքագիտական տեսությունները սոցիալ-քաղաքագիտական խնդիրների վերլուծության ժամանակ:
5. Վերլուծել և գնահատել ժամանակակից միջազգային հարաբերությունները, եվրասիական ինտեգրացիոն և համաշխարհային քաղաքականության գործընթացները:

- ***ընդհանրական իմացական հմտությունները՝***

1. Բնութագրել, գնահատել հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական գործընթացները և պատճառահետևանքային կապ հաստատել նրանց միջև:
2. Մասնակցել բազմաբնույթ քննարկումների, վերլուծել առկա խնդիրները և գնահատել դրանց լուծման համար անհրաժեշտ հնարավորությունները:
3. Իրականացնել մասնագիտական հաղորդակցությունը բանավոր և գրավոր ձևաչափով՝ ռուսերեն, հայերեն լեզուներով:

4. Պատրաստել զեկույցներ, ներկայացնել հետազոտական աշխատանքների արդյունքները, վարել գիտական բանավեճեր։

*Կարողունակությունը (կոմպետենցիան)՝*

*5. ինքնուրույնությունը և պատասխանատվությունը՝*

1. Արդյունավետորեն պլանավորել ժամանակն ու մարդկային ռեսուրսները։
2. Պահպանել մասնագիտական էթիկայի նորմերը։
3. Վերարտադրել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների աշխատանքային սկզբունքները, կատարել վիճակագրական աշխատանքներ, ինչպես նաև պաշտպանվել արտակարգ իրավիճակներում և պատերազմական պայմաններում։

**6. «Քաղաքագիտություն» բակալավրի կրթական ծրագրի պահանջարկը.**

Ժամանակակից քաղաքականության բազմազանությունը պահանջում է վերլուծության տարբեր մակարդակների համադրություն՝ անհատականից մինչև գլոբալ, ինչպես նաև տարբեր գործիքների կիրառում՝ քանակական և որակական: «Քաղաքագիտություն» բակալավրի կրթական ծրագիրը մրցակցային է և արդի, քանի որ սույն ծրագիրը թույլ է տալիս պատրաստել քաղաքական գիտությունների մի քանի ոլորտների (քաղաքական ինստիտուտներ, գործընթացներ, քաղաքական գիտության պատմություն, քաղաքական տեսություն, միջազգային հարաբերություններ) հիմնարար մասնագիտացված կադրեր: Ըստ որում, պարտադիր մասնագիտական մոդուլներին զուգահեռ, կամընտրական առարկաների միջոցով ծրագիրը հնարավորություն է տալիս տիրապետել օտար լեզուների և ձեռք բերել հատուկ կարողություններ՝ մասնագիտական թարգմանություններ իրականացնելու համար: Ծրագրի առավելություններից են նաև նրա միջառարկայական և ներառարկայական կապերը, որոնք հնարավորություն են տալիս ձեռք բերել ներածական գիտելիքներ միջազգայնագիտական, տնտեսագիտական և իրավագիտական ոլորտներում, ինչպես

նաև մասնագիտական կարողություններ վերոհիշյալ ուղղություններով հետագա մագիստրոսական կրթությունը շարունակելու համար: